# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N «ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/23»

ք. Երևան «___» ______ 2026 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտ Մոթորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Շախբազյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **<u>10</u> աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա **դեկտեմբերի 30-ը:**

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած միավոր գների հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից զանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար զանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018562
ՀՎՀՀ 02698732

Подписано цифровой подписью: HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=•••••••••, givenName=•••••••, serialNumber=5bdc672203a3, cn=HAKOBYAN HASMIK 5610800161
Дата: 2026.05.07 17:18:56 +04'00'

**Գլխավոր քարտուղար**

------------------------- **Հ. Հակոբյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Գարանտ Մոթորս» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Թբիլիսյան խճ. 20

Հ/Հ 2470075092810000

«Արդշինբանկ»ՓԲԸ

ՀՎՀՀ 01310872

Digitally signed by ANANIKYAN ALVARD 5505720129

Տնօրեն-------------------------Դ.Շախբազյան

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված N 1*
*« » 2026 թ. կնքված*
*«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/23» ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ՝ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհա-նուր քանակը | Մատուցման | |
| | | | | | | | Հասցեն | Ժամկետը |
| 1 | **50111130/2** | **ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ** | Նախատեսվում է Տոյոտա Կորոլլա 1.6 լ. շարժիչով, 2017 թ. արտադրության ավտոմեքենայի (244ԼԼ60) վերանորոգման ծառայությունների մատուցումը ըստ պահանջի՝ համաձայն կից ներկայացված ծառայության տեսակի և դրանց առավելագույն միավոր գների: Պարտադիր պայման է հանդիսանում ծառայությունների մատուցումը Երևան քաղաքում, ընդ որում ծառայության մատուցման ընթացքում պահանջվող պահեստամասերը, քայուղերը և այլ օժանդակ նյութերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի հայտի հիման վրա՝ առավելագույնը 1 աշխատանքային օրվա ընթացքում: Առանձին դեպքերում Պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ: Ավտոմեքենայի սպասարկման և նորոգման համար պատվիրատուի պահանջով Կատարողի կողմից կազմվում, կնքվում և պատվիրատուին է ներկայացվում նախնական զննման և գնահատման ակտ: | դրամ | **250000** | 1 | ք. Երևան, Կատարողի հասցեում | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20-րդ օրացուցային օրվանից սկսած, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ծառայության մատուցումը սկսել ավելի շուտ ժամկետում՝ մինչև 2026թ. դեկտեմբերի 30-ը ներառյալ; |

Подписано цифровой подписью:
HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=• • • • • • • ,
givenName=• • • • • • • ,
serialNumber=5bdc672203a3,
cn=HAKOBYAN HASMIK
5610800161
Дата: 2026.05.07 17:19:23 +04'00'

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

-------------------------- **Հ. Հակոբյան**
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

Digitally signed by ANANIKYAN ALVARD
5505720129
--------------------------------
**Դ.Շախբազյան**
(ստորագրություն)
Կ.Տ

*ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ՄԱՏՈՒՅՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԻԱՎՈՐ ԳՆԵՐԸ*

ՀՀ դրամ

| h/h | Ծառայության տեսակը | Ավտոմեքենա Տոյոտա Կորոլլա 1.6լ, 2017 թ., (244ԼԼ60) |
|---|---|---|
| 1 | **Տեխ.զննում/դիագնոստիկա** | |
| 2 | Բռնկման համակարգի ստուգում | 3000 |
| 3 | Սառեցման համակարգի ստուգում | 3000 |
| 4 | Յուղման համակարգի ստուգում | 3000 |
| 5 | Արտացման համակարգի ստուգում | 3000 |
| 6 | Կցորդման համակարգի ստուգում | 3000 |
| 7 | ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում | 3000 |
| 8 | **Վերանորոգում** | |
| 9 | **1. Շարժիչ** | |
| 10 | Շարժիչի հանում և տեղադրում | 80000 |
| 11 | Շարժիչի քանդում արատավորում և հավաքում | 150000 |
| 12 | Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները | 360000 |
| 13 | Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով | 60000 |
| 14 | Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով | 50000 |
| 15 | Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ | 25000 |
| 16 | Վառոցքի մոմի բնիկի նորոգում | 5000 |
| 17 | Շարժիչի փականների զսպանակների փոխարինում | 5000 |
| 18 | Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ | 20000 |
| 19 | Հրիչների կամ հիդրո-հրիչների փոխարինում 1 կ-տ | 20000 |
| 20 | Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում | 50000 |
| 21 | Ծնկաձև լիսեռի հղկում | 20000 |
| 22 | Ծնկաձև լիսեռի  հանում տեղադրում կամ փոխարինում | 50000 |
| 23 | Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ | 40000 |
| 24 | Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում | 10000 |
| 25 | Ծնկաձև լիսեռի ուղղում | 20000 |
| 26 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | 20000 |
| 27 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | 70000 |
| 28 | Շարժիչի բլոկի փոխարինում | 250000 |
| 29 | Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка) | 50000 |
| 30 | Մխոցի փոխարինում 1 հատ | 40000 |
| 31 | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում | 50000 |
| 32 | Բաշխիչ լիսեռի ականոցների հանում ևտեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 33 | Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում | 5000 |
| 34 | Փոկանիվի փոխարինում | 12000 |
| 35 | Շարժիչի շղթայի փոխարինում | 120000 |
| 36 | Շարժիչի կարտերի նորոգում (եռակցում) | 25000 |
| 37 | Շարժիչի կարտերի միջադիրի փոխարինում | 25000 |
| 38 | Շարժիչի կարտերի հանում, տեղադրում մաքրումով | 20000 |
| 39 | Շարժիչի յուղի մղիչի փոխարինում | 45000 |
| 40 | Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում | 25000 |
| 41 | Շարժիչի յուղի մղիչի մաքրում | 25000 |
| 42 | Յուղի ծորակի փոխարինում | 15000 |
| 43 | Օդաքաշակ փողրակի փոխարինում | 5000 |
| 44 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 30000 |
| 45 | Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում | 25000 |
| 46 | Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում | 65000 |
| 47 | Շարժիչի կափույրի փոխարինում | 25000 |
| 48 | Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում | 25000 |
| 49 | Շարժիչի շարժաթևիփոխարինում 1 հատ | 10000 |
| 50 | Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ | 80000 |
| 51 | Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում | 15000 |
| 52 | Ատամնանիվի փոխարինում | 10000 |
| 53 | Սուխարիկ փոխարինում 1կ/տ | 6000 |
| 54 | Շարժիչի հանդարտիչի փոխարինում | 15000 |
| 55 | Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում | 10000 |
| 56 | Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում | 16000 |
| 57 | Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով | 35000 |

| | | |
|---|---|---|
| 58 | Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում | 5000 |
| 59 | Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում | 20000 |
| 60 | Շարժիչի փոկի ձգիչի նորոգում | 5000 |
| 61 | Շարժիչի գամասեղի փոխարինում | 5000 |
| 62 | Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով | 5000 |
| 63 | Գլխիկի հեղույսի փոխարինում | 5000 |
| 64 | Ծնկաձն լիսեռի հեղույսի փոխարինում | 5000 |
| 65 | Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում | 40000 |
| 66 | Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում | 40000 |
| 67 | **2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | |
| 68 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 2000 |
| 69 | Ավտոմեքենայի յուղում | 1000 |
| 70 | Համակարգչային ախտորոշում, քերությունների վերացմամբ | 8000 |
| 71 | Յուղի ռադիատորի փոխարինում | 15000 |
| 72 | Յուղի ռադիատորի նորոգում | 10000 |
| 73 | Շարժիչի կոլեկտորի փոխարինում | 15000 |
| 74 | Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում | 15000 |
| 75 | Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ | 4000 |
| 76 | Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում | 15000 |
| 77 | Օդի զտիչի փոխարինում | 3000 |
| 78 | Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 8000 |
| 79 | Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում | 4000 |
| 80 | Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում | 5000 |
| 81 | Ինժեկտորի բոցամուղերի մաքրում | 6000 |
| 82 | Բոցամուղի կոդավորում | 12000 |
| 83 | Ինժեկտորի բոցամուղիխտաբուկերիփոխարինում | 5000 |
| 84 | Բենզամղիչի փոխարինում | 15000 |
| 85 | Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում | 5000 |
| 86 | Վառելանյութի  խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 8000 |
| 87 | Բռնկման կարգավորում | 4000 |
| 88 | Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 89 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 15000 |
| 90 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում | 20000 |
| 91 | Վառելիքի բաքի մաքրում | 15000 |
| 92 | Օդի ծախսի տվիչի փոխարինում | 8000 |
| 93 | Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում | 8000 |
| 94 | Ջրի խողովակի, փողրակի փոխարինում | 5000 |
| 95 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում | 15000 |
| 96 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում | 15000 |
| 97 | Յուղի ճնշման տվիչի փոխարինում | 10000 |
| 98 | Տվիչի փոխարինում | 5000 |
| 99 | **3. Սառեցման և արտածման համակարգ** | |
| 100 | Հովհարի փոխարինում | 20000 |
| 101 | Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 102 | Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում | 20000 |
| 103 | Ռադիատորի նորոգում | 45000 |
| 104 | Շերտափեղկիփոխարինում | 10000 |
| 105 | Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում | 10000 |
| 106 | Ընդարձակող բաքի  փոխարինում | 10000 |
| 107 | Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում | 5000 |
| 108 | Ջրի ծորակի փոխարինում | 10000 |
| 109 | Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում | 10000 |
| 110 | Հովհարի շարժիչի  հանում և տեղադրում կամ փոխարինում | 25000 |
| 111 | Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված | 60000 |
| 112 | Վառարանի ռադիատորի նորոգում | 20000 |
| 113 | Վառարանի շարժիչի փոխարինում | 30000 |
| 114 | Թերմոստատի փոխարինում | 15000 |
| 115 | Ջրի մղիչի փոխարինում միջադիրով | 30000 |
| 116 | Ջրի մղիչի միջադիրի փոխարինում | 5000 |
| 117 | Գեներատորի փոկի փոխարինում | 15000 |
| 118 | Գեներատորի փոկի ձգող հոլովակի  փոխարինում | 10000 |
| 119 | Ջրի ռադիատորի վերանորոգում | 50000 |
| 120 | Թերմոստատի միջադիրի փոխարինում | 2000 |
| 121 | Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 122 | Խլարարի 1 հատխողովակի փոխարինում | 15000 |
| 123 | Խլարարի անուրի (хамут) փոխարինում | 2000 |
| 124 | Խլարարի ներդիրի փոխարինում | 5000 |
| 125 | Խլարարի կախոցի փոխարինում | 2000 |
| 126 | Հովացման հեղուկի փոխարինում | 2000 |

| | | |
|---|---|---|
| 127 | 4. Կցորդում և ՓՏ | |
| 128 | ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում | 55000 |
| 129 | ԱՓՏ-ի հանում և տեղադրում | 70000 |
| 130 | ԱՓՏ-ի սոլենոիդի վերանորոգում կամ փոխարինում | 40000 |
| 131 | ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում | 35000 |
| 132 | ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում | 10000 |
| 133 | ԱՓՏ-ի ատամնանիվի փոխարինում | 20000 |
| 134 | ԱՓՏ-ի խծծոցների/սալնիկների/ հավաքածուի փոխարինում | 30000 |
| 135 | ԱՓՏ-ի հիդրոտրանսֆորմատորի փոխարինում | 70000 |
| 136 | ԱՓՏ-ի հիդրոբլոկի փոխարինում | 50000 |
| 137 | ԱՓՏ-ի ֆրիկցիոն և արգելակման ժապավենների փոխարինում | 30000 |
| 138 | 5. Կախոց | |
| 139 | Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում | 45000 |
| 140 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 141 | Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 15000 |
| 142 | Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 143 | Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 144 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | 15000 |
| 145 | Անվակունդի գամասեղի և հեղյուսի փոխարինում (մեկ անիվի համար) | 5000 |
| 146 | Ձախ կամ աջ հոդակապի խտաբուկերի փոխարինում | 10000 |
| 147 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | 8000 |
| 148 | Առջևի զսպանակի փոխարինում | 8000 |
| 149 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 8000 |
| 150 | Հարվածամեղմիչի վռանների փոխարինում | 2000 |
| 151 | Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 152 | Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ | 12000 |
| 153 | Ներքևի լծակի հեղույսի փոխարինում | 4000 |
| 154 | Հարվածիչի (բարձիկի փոխարինում) | 8000 |
| 155 | Վերևի լծակի հանում և տեղադրում  կամ փոխարինում | 15000 |
| 156 | Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ | 12000 |
| 157 | Վերևի լծակի հեղույսի փոխարինում | 4000 |
| 158 | Հետևի վերևի լծակի վռանի  փոխարինում 1 հատ | 15000 |
| 159 | Գնդե հոդակապերի պատյանի փոխարինում | 5000 |
| 160 | Գնդե հոդակապերի փոխարինում | 15000 |
| 161 | Կայունարարիհանումևտեղադրումկամփոխարինում | 20000 |
| 162 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 8000 |
| 163 | Հետևի կայունարարի վռաների փոխարինում | 8000 |
| 164 | Կայունարարի կալունակի փոխարինում | 5000 |
| 165 | Հետևի զսպանակների փոխարինում | 7000 |
| 166 | Հետևի ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում | 12000 |
| 167 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 12000 |
| 168 | Հետևի ցնցամեղմիչի փոխարինում | 8000 |
| 169 | Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում | 2000 |
| 170 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1հատ | 8000 |
| 171 | 6. Ղեկային մեխանիզմ | |
| 172 | Ղեկասյունակի (ՍՏևՏվՍՌ) հիմնական նորոգում, | 120000 |
| 173 | Ղեկասյունակի (ՍՏևՏվՍՌ) արոռիկի փոխարինում | 25000 |
| 174 | Ղեկասյունակի (ՍՏևՏվՍՌ)  առանցքային սռնու փոխարինում | 20000 |
| 175 | Ղեկասյունակի (ՍՏևՏվՍՌ)  խաչուկների փոխարինում | 25000 |
| 176 | Ղեկասյունակի (ՍՏևՏվՍՌ)  վերանորոգման հավաքածույի փոխարինում | 50000 |
| 177 | Ղեկասյունակի (ՍՏևՏվՍՌ) քանդում, արատավորում, հավաքում | 45000 |
| 178 | Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում | 15000 |
| 179 | Ղեկասյունակի պատյանի փոխարինում | 2500 |
| 180 | Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում | 15000 |
| 181 | Ղեկային մեխանիզմի ղեկասյունակի ամրացման անուրի փոխարինում | 15000 |
| 182 | Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում | 15000 |
| 183 | Ղեկային կալունի ձգանների փոխարինում | 15000 |
| 184 | Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում | 13000 |
| 185 | ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում | 20000 |
| 186 | ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում | 10000 |
| 187 | Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում | 25000 |
| 188 | Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները | 45000 |
| 189 | Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 190 | Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում | 25000 |
| 191 | Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում | 25000 |
| 192 | Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածույի փոխարինում | 25000 |
| 193 | Ղեկային ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 194 | Ղեկային ձողի գնդե հոդակապի նորոգում | 15000 |

| | | |
|---|---|---|
| 195 | Ղեկային ձգաձողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 196 | Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 197 | Ղեկային ձգաձողի ծայրակալների փոխարինում | 10000 |
| 198 | Հիդրոուժեղարարի համա-կարգի յուղի փոխարինում | 5000 |
| 199 | 7. Արգելակային համակարգ | |
| 200 | Վակումային ուժեղարարի փոխարինում | 40000 |
| 201 | Վակումային ուժեղարարի փականի փոխարինում | 15000 |
| 202 | Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 30000 |
| 203 | Գլխ. գլանի հիմնական նորո-գում, բոլոր աշխատանքների ընդգրկումով | 45000 |
| 204 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 205 | Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 206 | Առջևի սուպպորտի վերանորոգում | 15000 |
| 207 | Հետևի սուպպորտի վերանորոգում | 15000 |
| 208 | Արգելակի վքարային արգելահանման լծակի փոխարինում | 10000 |
| 209 | Արգելակի վքարային արգելահանման լծակի նորոգում | 10000 |
| 210 | Արգելակային փողրակի փոխարինում | 5000 |
| 211 | Արգելակայինկոճղակներիփոխարինում | 8000 |
| 212 | Արգելակային համակարգի օդահանում | 5000 |
| 213 | Սկավառակային  կոճղակների փոխարինում | 8000 |
| 214 | Թմբուկային կոճղակների փոխարինում | 15000 |
| 215 | Առջևի արգելակային  սկավառակի փոխարինում | 8000 |
| 216 | Առջևի արգելակային սկավա-ռակների հղկում 1 հատ | 10000 |
| 217 | Հետևի արգելակային սկավառակի փոխարինում | 10000 |
| 218 | Հետևի արգելակային  թմբուկա  հղկում 1հատ | 15000 |
| 219 | Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 220 | Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում | 15000 |
| 221 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 222 | Ձեռքի արգելակի ճոպանի վերանորոգում | 10000 |
| 223 | Հետևի արգելակների կարգավորում | 5000 |
| 224 | Արգելակային հեղուկի փոխարինում | 5000 |
| 225 | 8. Էլեկտրասարքավորում | |
| 226 | Գեներատորի հանում, տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 227 | Գեներատորի քանդում և արատավորում, հավաքում | 25000 |
| 228 | Գեներատորի ստատորի փոխարինում | 15000 |
| 229 | Գեներատորի ռոտորի փոխարինում | 15000 |
| 230 | Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում | 15000 |
| 231 | Գեներատորի դիոդային կամրջակի փոխարինում | 15000 |
| 232 | Գեներատորի առանցքակալի փոխարինում | 15000 |
| 233 | Գեներատորի փոկանիվի փոխարինում | 10000 |
| 234 | Մեկնարկիչի քանդում և արատավորում, հավաքում | 15000 |
| 235 | Մեկնարկիչի խարիսխի փոխարինում | 15000 |
| 236 | Մեկնարկիչի իրանի փոխարինում | 15000 |
| 237 | Մեկնարկիչի բռնիչի փոխարինում | 15000 |
| 238 | Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում | 15000 |
| 239 | Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում | 15000 |
| 240 | Մեկնարկիչի ռելեի փոխարինում | 15000 |
| 241 | Մեկնարկիչի ածուխների փոխարինում | 15000 |
| 242 | Ազդանշանի կարգավորում | 10000 |
| 243 | Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 10000 |
| 244 | Առջևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում | 5000 |
| 245 | Սարքերի պանելի հանում և տեղադրում | 65000 |
| 246 | Հետևի լապտերի հանում և տեղադրում կամ փոխարինում | 5000 |
| 247 | Առջևի լապտերների կարգավորում | 5000 |
| 248 | Բռնկման կոճղաքի հանում և տեղադրում | 10000 |
| 249 | Վառոցքի կոճի հանում և տեղադրում | 8000 |
| 250 | Ինդուկցիոն կոճի հանում և տեղադրում | 25000 |
| 251 | Վազքաչափի փոխարինում | 15000 |
| 252 | Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 253 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | 5000 |
| 254 | Ապակելվացիչի  հանում և տեղադրում կամ փոխարինում | 10000 |
| 255 | Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում | 10000 |
| 256 | Ապահովիչների փոխարինում | 10000 |
| 257 | Ապակեամբարձիչների փոխարինում | 25000 |
| 258 | Ապակեամբարձիչների շարժիչի փոխարինում | 25000 |
| 259 | Էլեկտրական տվիչների փոխարինում | 2000 |
| 260 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | 2000 |
| 261 | Սարտկոցի կլեյմաների փոխարինում | 1000 |
| 262 | Ակումլյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում | 1000 |
| 263 | Ակումլյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում | 1000 |

| | | |
|---|---|---|
| 264 | Էլ/ կոճակիփոխարինում | 2000 |
| 265 | Էլեկտրականշտեյկերիփոխարինում | 1000 |
| 266 | Ջրի ցողիչի փոխարինում | 15000 |
| 267 | Բեռնախցիկի փականի փոխարինում | 10000 |
| 268 | Հագոցի փականի փոխարինում | 10000 |
| 269 | 9. Ավտոմեքենայի սրահ | |
| **270** | Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում | 15000 |
| 271 | Դռան փականի փոխարինում | 15000 |
| 272 | Բեռնախցիկի ճոպանի փոխարինում | 15000 |
| 273 | Լամպի փոխարինում | 5000 |
| 274 | Ամրակներ (կլիպս) փոխարինում 1հատ | 10000 |
| 275 | 10. Այլ ծառայություններ | |
| **276** | Եռակցման աշխատանքներ *գին 1սմ (գծ.մ) համար* | 5000 |
| 277 | Խառատային աշխատանքներ *գին 1 կտորի համար* | 20000 |
| 278 | Փականագործական աշխատանքներ *գին 1 ժամ աշխատանքի համար* | 20000 |
| 279 | Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում | 15000 |
| 280 | Անիվի հանում և տեղադրում | 1000 |
| 281 | Անվադողի վերանորոգում | 5000 |
| 282 | Անիվի բալանսավորում | 2000 |
| 283 | Քարշարկի ծառայություն *գին 1կմ, համար* | 2000 |
| 284 | Վերանորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասեր, քսայուղեր և այլ օժանդակ նյութեր | |
| 285 | 1. Շարժիչ | |
| **286** | Շարժիչի բլոկ | 1923500 |
| 287 | Շարժիչի գլխիկ | 1250000 |
| 288 | Բարձիկ | 95000 |
| 289 | Շարժիչի գլխիկի միջադիր | 32000 |
| 290 | Շարժիչի միջադիրների կոմպլեկտ | 142000 |
| 291 | Շարժիչի փական դուրս մղող | 12000 |
| 292 | Շարժիչի փական ներս մղող | 13000 |
| 293 | Շարժիչի փականի խտաբուկ | 8000 |
| 294 | Փականի զսպանակ | 8000 |
| 259 | Ծնկածև լիսեռ | 325000 |
| 296 | Ծնկածև լիսեռի խտաբուկ առջևի | 15000 |
| 297 | Ծնկածև լիսեռի խտաբուկ հետևի | 15000 |
| 298 | Ծնկածև լիսեռի արմատական ներդիրներ | 35000 |
| 299 | Ծնկածև լիսեռի շարժաթևային ներդիրներ | 40000 |
| 300 | Մխոց | 80000 |
| 301 | Մխոցային օղակներ | 120000 |
| 302 | Մխոցային մատ | 25000 |
| 303 | Ատամնանիվ | 20000 |
| 304 | Շարժիչի կափույր | 135000 |
| 305 | Շարժիչի կափույրի կափարիչ | 80000 |
| 306 | Շարժիչի շղթա | 95000 |
| 307 | Շարժիչի պաշտպանիչ | 25000 |
| 308 | Փոկի ձգիչ | 35000 |
| 309 | Հիդրոձգան | 25000 |
| 310 | Հրիչ | 30000 |
| 311 | Շարժիչի հիդրոհրիչ | 30000 |
| 312 | Շարժիչի կալուն | 45000 |
| 313 | Շարժիչի հանդարտիչ | 65000 |
| 314 | Շարժիչի հոլովակ | 15000 |
| 315 | Շարժիչի հոլովակի առանցքակալ | 25000 |
| 316 | Շարժիչի առջևի կափարիչ | 35000 |
| 317 | Շարժիչի վերևի կափարիչ | 120000 |
| 318 | Շարժիչի վերևի կափարիչի միջադիր | 22000 |
| 319 | Թափանիվ | 152000 |
| 320 | Շարժաթև | 35000 |
| 321 | Ատամնանիվ բաշխիչ լիսեռի | 55000 |
| 322 | Ատամնանիվ ծնկածև լիսեռի | 35000 |
| 323 | Փոկանիվ ծնկածև լիսեռի | 12000 |
| 324 | Փոկանիվ | 8000 |
| 325 | Սուփարիկ փականի | 8000 |
| 326 | Գլխիկի բոլտ | 5000 |
| 327 | Ծնկածև լիսեռի բոլտ | 5000 |
| 328 | Պարկուճ | 5000 |

| | | |
|---|---|---|
| 329 | Քարտեր | 45000 |
| 330 | Փական յուղի տարայի | 15000 |
| 331 | Խուփ ընդարձակման բաքի | 8000 |
| 332 | Խուփ շարժիչի | 12000 |
| 333 | Թաքիկ յուղի մղիչի | 18000 |
| 334 | Բարձիկ փ/տուփի | 65000 |
| 335 | Յուղի մղիչ | 85000 |
| 336 | Միջադիր յուղի մղիչի | 15000 |
| 337 | Յուղի ծորակ | 15000 |
| 338 | Շարժիչի յուղի արանքաչափիչ | 12000 |
| 339 | Շարժիչի յուղի արանքաչափիչի իրան | 8000 |
| 340 | Կափույրի միջադիր | 15000 |
| 341 | Քարտերի միջադիր | 12000 |
| 342 | Շարժիչի բաշխիչ լիսեռ | 285000 |
| 343 | Բ/լիսեռի կափարիչ | 35000 |
| 344 | Բ/ լիսեռի խտաբուկ | 22000 |
| 345 | Շարժիչի բ/լիսեռի ականոց | 15000 |
| 346 | Շարժիչի բ/լիսեռի երիթակ | 12000 |
| 347 | Ուղղորդիչ վռան | 10000 |
| 348 | Շարժիչի գամասեղ | 1000 |
| 349 | Գլխիկի միջադիր | 25000 |
| 350 | **2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | |
| 35 | Յուղ շարժիչի հանքային, *1 լ* | 2300 |
| 352 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, *1 լիտր* | 5000 |
| 353 | Յուղ շարժիչի սինթետիկ, *1 լ* | 7500 |
| 354 | Յուղման համակարգի լվացման հեղուկ *1 լիտր* | 2000 |
| 355 | Յուղի զտիչ | 9500 |
| 356 | Յուղի ռադիատոր | 42000 |
| 357 | Վառոցքի կոճ | 39000 |
| 358 | Արտածման կալեկտոր աջ | 45000 |
| 359 | Արտածման կալեկտոր ձախ | 45000 |
| 360 | Ներածման կալեկտոր աջ | 45000 |
| 361 | Ներածման կալեկտոր ձախ | 45000 |
| 362 | Արտածման կալեկտորի աջ միջադիր | 18000 |
| 363 | Արտածման կալեկտորի ձախ միջադիր | 18000 |
| 364 | Ներածման կալեկտորի աջ միջադիր | 18000 |
| 365 | Ներածման կալեկտորի ձախ միջադիր | 18000 |
| 366 | Վառոցքի մոմ | 9500 |
| 367 | Բենզոբաքի բենզոմղիչի ցանց | 15000 |
| 368 | Բենզոմղիչ | 88000 |
| 369 | Բենզոբաք | 150000 |
| 370 | Ինժեկտորի բոցամուղ բենզինով շարժիչի | 95000 |
| 371 | Բոցամուղի խտաբուկ | 10000 |
| 372 | Վառելանյութի մղիչ էլեկտրական | 88000 |
| 373 | Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման | 45000 |
| 374 | Վառելիքի կոշտ մաքրման զտիչ | 35000 |
| 375 | Վառելանյութի խողովակ | 30000 |
| 376 | Օդի զտիչ | 16000 |
| 377 | Օդի ծախսաչափիչ | 75000 |
| 378 | Օդի զտիչի փողրակ | 15000 |
| 379 | Ջերմաստիճանային տվիչ | 28000 |
| 380 | Յուղի տվիչ | 29000 |
| 381 | Բաշխիչ լիսեռի տվիչ | 32000 |
| 382 | Օդի ծախսի տվիչ | 35000 |
| 383 | Արագաչափի տվիչ | 25000 |
| 384 | Հովհարի տվիչ | 15000 |
| 385 | Ջրի խողովակ երկար | 25000 |
| 386 | Ջրի խողովակ կարճ | 19500 |
| 387 | Ջրի տվիչ | 21500 |
| 388 | Բենզոբաքի տվիչ | 32500 |
| 389 | Սարման ընթացքի կարգավորիչ | 28500 |
| 390 | Ղեկավարման համակարգիչ | 350000 |
| 391 | Պարապ ընթացքի տվիչ | 19000 |
| 392 | Թթվածնի տվիչ | 35000 |
| 393 | **3. Սառեցման և արտածման համակարգ** | |

| | | |
|---|---|---|
| 394 | Հովհար | 95000 |
| 395 | Հովհարի շարժիչ | 45000 |
| 396 | Հովհարի բևանիվ | 32000 |
| 397 | Ռադիատոր | 85000 |
| 698 | Ընդարձակող բաքի փական | 12000 |
| 399 | Ընդարձակող բաքի փողրակ | 15000 |
| 400 | Ընդարձակող բաք | 45000 |
| 401 | Ռադիատորի փողրակ ներքևի | 15000 |
| 402 | Ռադիատորի փողրակ վերևի | 16500 |
| 403 | Թերմոստատ | 23500 |
| 404 | Ջրի մղիչ | 45600 |
| 405 | Ջրի մղիչի միջադիր | 10000 |
| 406 | Ջրի պոմպի խտաբուկ | 5000 |
| 407 | Ջրի պոմպի առանցքակալ | 19000 |
| 408 | Ջրի պոմպի թևակ | 35000 |
| 409 | Սառեցման հեղուկ *1 լիտր* | 4500 |
| 410 | Չսառչող հեղուկ ապակիների համար | 3000 |
| 411 | Ջգիչ հոլովակի | 31500 |
| 412 | Փոկ մեծ | 22500 |
| 413 | Հովացման համակարգի ռետինե խողովակ | 12000 |
| 414 | Ծորակ | 8000 |
| 415 | Փոկանիվ գեներատորի փոկի | 13500 |
| 416 | Միջադիր թերմոստատի | 5000 |
| 417 | Խլարարի ներդիր | 8000 |
| 418 | Խլարարի կախոց | 12000 |
| 419 | Խլարարի խողովակ | 50000 |
| 420 | Կրոնշտեյն | 15000 |
| 421 | Խլարարի անուր (Խամուտ) | 2000 |
| 422 | Խլարար | 350000 |
| 423 | Շարժիչ վառարանի | 80000 |
| 424 | Վառարանի ռադիատոր | 75000 |
| 425 | **4. Կցորդում և ՓՏ** | |
| 426 | ԱՓՏ-ի զտիչ | 28000 |
| 427 | ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու | 120000 |
| 428 | ԱՓՏ-ի սոլենոիդ | 80000 |
| 429 | ԱՓՏ յուղ, 1 լիտր | 12000 |
| 430 | ԱՓՏ-ի յուղի մղիչ | 130000 |
| 431 | ԱՓՏ-ի ատամնանիվ | 130000 |
| 432 | ԱՓՏ-ի խծծոցների/սալնիկների/ հավաքածու | 30000 |
| 433 | ԱՓՏ-ի հիդրոտրանսֆորմատոր | 150000 |
| 434 | ԱՓՏ-ի հիդրոբլոկ | 125000 |
| 435 | ԱՓՏ-ի ֆրիկցիոն և արգելակման ժապավեններ | 120000 |
| 436 | **5. Կախոց** | |
| 437 | Տրավերս | 50000 |
| 438 | Կրոնշտեյն | 4000 |
| 439 | Աջ կամ ձախ հոդակապ | 80000 |
| 440 | Անվակունդ | 60000 |
| 441 | Անվակունդի խցուկ | 14000 |
| 442 | Անվակունդի ներքին առանցքակալ | 48500 |
| 443 | Անվակունդի արտաքին առանցքակալ | 48500 |
| 44 | Հետևի անվակունդի առանցքակալ | 42000 |
| 445 | Հարվածամեղմիչի թասակ | 35000 |
| 446 | Զսպանակ | 40000 |
| 447 | Առջևի հարվածամեղմիչ | 69000 |
| 448 | Հարվածամեղմիչի փոշեթիկնոց | 18000 |
| 449 | Հարվածամեղմիչի վռան | 5000 |
| 450 | Ներքևի լծակ | 69000 |
| 451 | Ներքևի լծակի վռան | 15000 |
| 452 | Վերևի լծակ | 60000 |
| 453 | Վերևի լծակի վռան | 15000 |
| 454 | Գնդե հոդակապ | 28000 |
| 455 | Առջևի կայունարար | 42000 |
| 456 | Առջևի կայունարարի վռան | 8000 |
| 457 | Առջևի կայունարարի կանգնակ | 25000 |
| 458 | Հետևի զսպանակ | 40000 |
| 459 | Հետևի ցնցամեղմիչ | 65000 |

| | | |
|---|---|---|
| 460 | Հետևի մետաղաձող (շտանգա) | 43000 |
| 461 | Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան | 15000 |
| 462 | Հետևի անկյունագծային լծակ | 32000 |
| 463 | Անկյունագծային լծակի վռան | 15000 |
| 464 | Աջ կամ ձախ ձգան | 18000 |
| **465** | **6. Ղեկային մեխանիզմ** | |
| 466 | Ղեկային կալուն | 270000 |
| 467 | Ղեկային կալունի առանցքակալ | 30000 |
| 468 | Ղեկային կալունի վերանորոգման կոմպլեկտ | 80000 |
| 469 | Ղեկային կալունի խաչուկ | 35000 |
| 470 | Հիդրոուժեղարարի փոկ | 15000 |
| 471 | Հիդրոուժեղարարի պոմպ | 140000 |
| 472 | Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ | 45000 |
| 473 | Ձգան մեջտեղի | 33000 |
| 474 | Ղեկային ձող | 52000 |
| 475 | Ղեկային ձողի ծայրակալ | 20000 |
| 476 | Հիդրոուժեղարարի յուղ, *1 լ.* | 9500 |
| 477 | **7. Արգելակային համակարգ** | |
| 478 | Գլխ. գլան | 80000 |
| 479 | Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ | 39000 |
| 480 | Վակուումային ուժեղարար | 200000 |
| 481 | Արգելակային փողրակ | 25000 |
| 482 | Սուպպորտ | 95000 |
| 483 | Արգելակային հեղուկ | 3500 |
| 484 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 45000 |
| 485 | Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ | 35000 |
| 486 | Առջևի արգելակային սկավառակ | 45000 |
| 487 | Ձեռքի արգելակի ճոպան | 30000 |
| 488 | Ձեռքի արգելակի լծակ | 25000 |
| 489 | **8. Էլեկտրասարքավորում** | |
| **490** | Գեներատոր | 185000 |
| 491 | Գեներատորի դիոդային կամրջակ | 35000 |
| 492 | Գեներատորի ռելե | 37500 |
| 493 | Գեներատորի առանցքակալ | 28000 |
| 494 | Ստարտեր | 175000 |
| 495 | Ստարտերի ռելե | 35000 |
| 496 | Ստարտերի ածուխ | 32000 |
| 497 | Բենդեքս | 42000 |
| 498 | Ստարտերի կցորդիչ (ավտոմատ) | 31000 |
| 499 | Առջևի լապտեր | 120000 |
| 500 | Հետևի լապտեր | 100000 |
| 501 | Հակամշուշային լապտեր | 35000 |
| 502 | Առջևի թարթիչ | 30000 |
| 503 | Հետևի թարթիչ | 30000 |
| 504 | Արգելակային լապտեր | 50000 |
| 505 | Խցիկի լապտեր | 35000 |
| 506 | Խցիկի լապտերի լամպ | 2000 |
| 507 | Արգելակային լապտերի լամպ | 3000 |
| 508 | Առջևի թարթիչ լապտերի լամպ | 3000 |
| 509 | Հետևի թարթիչի լապտերի լամպ | 3000 |
| 510 | Հետևի լապտերի լամպ | 3000 |
| 511 | Հակամշուշային լապտերի լամպ | 8000 |
| 512 | Արգելակային լապտերի լամպ | 3000 |
| 513 | Առջևի լապտերի լամպ | 15000 |
| 514 | Էլեկտրական անջատիչ | 5000 |
| 515 | Էլեկտրական տվիչ | 5000 |
| 516 | Տախոմետր | 150000 |
| 517 | Ապակեմաքրիչ | 5000 |
| 518 | Բռնկման կողպեք | 35000 |
| 519 | Էլեկտրալարերի գլխավոր խուրց | 100000 |
| 520 | Էլեկտրալարերի երկրորդային խուրց | 50000 |
| 521 | Վառոցքային լարերի խուրց | 30000 |
| 522 | Վառոցքի մոմի ծայրակալ | 4000 |
| 523 | Վազքաչափ | 25000 |
| 524 | Վազքաչափի ճոպան | 15000 |
| 525 | Դռան կողպեք | 30000 |

| | | |
|---|---|---|
| 526 | Ազդանշան | 20000 |
| 527 | Ապակելվացիչի բաչոկ | 35000 |
| 528 | Ապակելվացիչի շարժիչ | 30000 |
| 529 | Դռների կենտրոնական փական | 45000 |
| 530 | Հայելի կողային | 50000 |
| 531 | Դռան ապակու ամբարձիչ | 50000 |
| 532 | Դռան ապակու էլեկտրաամբարձիչի շարժիչ | 42200 |
| Ընդհանուր միավոր առավելագույն գների հանրագումարը /ՀՀ դրամ/ | | 19484100 |
| Ընտրված մասնակցի առաջարկած միավոր գների հանրագումարային գինը | | 9722050 |

* Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝
ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝
ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.
ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած միավոր գների հանրագումարային գինն է.
ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.
Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Подписано цифровой подписью:
HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=••••••••• ,
givenName=•••••• ,
serialNumber=5bdc672203a3,
cn=HAKOBYAN HASMIK
5610800161
Дата: 2026.05.07 17:20:06 +04'00'

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

-------------------------------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.

ԿԱՏԱՐՈՂ

Digitally signed by ANANIKYAN ALVARD
5505720129

--------------------------------Դ. Շախբազյան
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 2*
*«  »  2026 թ. կնքված*
*«ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/23» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ. ՀՀ պետական բյուջեից, ըստ ամիսների, այդ թվում`* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | **50111130/2** | **ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ-1** | - | - | - | - | **100000** | **100000** | **150000** | **150000** | **150000** | **250000** | **250000** | **250000** | **250000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Подписано цифровой подписью:
HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=••••••••••,
givenName=•••••••,
serialNumber=5bdc672203a3,
cn=HAKOBYAN HASMIK
5610800161
Дата: 2026.05.07 17:20:47 +04'00'

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

-------------------------------- **Հ. Հակոբյան**
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Digitally signed by ANANIKYAN
ALVARD 5505720129

--------------------------------**Դ. Շախբազյան**
(ստորագրություն)
Կ.Տ